

Մ. ՄԵԼՎԻՆ

Ս. ՀԱՍՏԵԴ

Արիզոնայի պետական համալսարան

Փիտսբուրգի համալսարան

ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ 2

ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԱՌԵՎՏՈՒՐ

Հանձնարարվում է համալսարանների
և քոլեջների համար



Գ Ի Տ Ա Ն Ք

Երևան 2001

S. Husted, M. Melvin
International Economics, v. 2, International Trade

Հասարեդ Ս., Մելվին Ս.

Միջազգային տնտեսագիտություն, II հատոր՝ Միջազգային առևտուր/-եր.։ Գիտանք, 2001. – 416 էջ.

Գիրքը նվիրված է ժամանակակից միջազգային տնտեսագիտության մասը կազմող միջազգային առևտրի առարկային։ Մանրամասն քննարկված են միջազգային առևտրի կաղապարների կառուցման եղանակներն ու տրամաբանությունը, դասական ու Յեկշեր-Օհլինի կաղապարները, առևտրի քաղաքականությունը, պատճենման իրավունքն ու մաքսերը, տարածքային տնտեսական համաձայնագրերը, միջազգային առևտրի և տնտեսական զարգացման կապը, ինչպես նաև միջազգային առևտրին վերաբերող բազմաթիվ այլ երևույթները։ Գիրքը հագեցված է իրական աշխարհի բազմաթիվ օրինակներով և տվյալներով։ Հայերեն հրատարակությունը համալրված է մոտ 600 բառահոդված պարունակող անգլերեն-հայերեն բացատրական բառարանով և հայերեն եզրերի բառացույցով։

Նախատեսված է համալսարանների և քոլեջների տնտեսագիտություն, միջազգային առևտուր և այլ հարակից մասնագիտությունների ուսանողների և դասախոսների համար։

Գրքի հրատարակությունը հովանավորել է Եվրասիա հիմնադրամը՝ Ամերիկայի Միացյալ Նահանգների Միջազգային զարգացման գործակալության տրամադրած դրամամիջոցներով։

Գրքում արտահայտված տեսակետները հեղինակներինն են և կարող են չհամընկնել ԱՄՆ-ի Միջազգային զարգացման գործակալության կամ Եվրասիա հիմնադրամի տեսակետների հետ։

ISBN 99930-806-8-3

© Addison-Wesley Educational Publishers Inc., 1998

© Գիտանք, հայերեն թարգմանության համար, 2001

© Ալեքսանդր Աղաբեկյան, բառարանի համար, 2001

Ընթերցողին ներկայացվող գիրքը ԱՄՆ-ի բուհերում լայն կիրառվող «Միջազգային տնտեսագիտություն» դասագրքի երկրորդ՝ «Միջազգային առևտուր» հատորն է: Առաջին՝ «Միջազգային ֆինանսներ» հատորը լույս է տեսել 1999թ., որտեղ զետեղված է գրքի երկու հատորների համար ընդհանուր նախաբանը: Գիրքը թարգմանվել է 1998թ. լույս տեսած ամերիկյան չորրորդ հրատարակությունից:

Հաշվի առնելով, որ սա միջազգային առևտրի առաջին թարգմանված դասագիրքն է և պարունակում է հայ ընթերցողի համար շուկայի տնտեսության այս բնագավառի բազմաթիվ նոր եզրեր, անհրաժեշտ գտանք մշակել և որպես գրքի հավելված զետեղել մոտ 600 բառ և բառակապակցություն պարունակող անգլերեն-հայերեն բացատրական բառարան և համապատասխան հայերեն-անգլերեն բառացույց, որտեղ ընդգրկված են գրքում հանդիպող բոլոր հիմնական հասկացությունները:

Գիրքը նախատեսված է համալսարանների և քոլեջների տնտեսագիտություն, միջազգային առևտուր և գործարարություն մասնագիտությունների ուսանողների և դասախոսների համար:

ՀԵՂԻՆԱԿԻ ԱՌԱՋԱԲԱՆԸ ՀԱՅԵՐԵՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Մայքլ Մելվինը և Ես ողջունում ենք մեր դասագրքի հրատարակումը հայերենով: Խանդավառված ենք, որ Հայաստանի համալսարանների ուսանողները առաջիկա տարիներին օգտվելու են մեր գրքից: Մենք շատ ենք ջանացել, որ այս դասագիրքը զանազան անհրաժեշտ տեղեկույթներ պարունակի միջազգային տնտեսագիտություն և միջազգային տնտեսական քաղաքականություն ուսումնասիրողների համար: Հուսով ենք, որ այս գլուխներում ընդգրկված նյութը ուսման ընթացքում կլուսավորի նրանց միտքը:

Ստիվեն Հասպեդ
հոկտեմբեր, 2000թ.

Երախտագրություն

Շնորհակալ եմ Եվրասիա հիմնադրամին՝ շնորհի միջոցով գրքի հրատարակումը դրամավորելու համար: Երախտագրություն եմ երկրորդ հատորի հեղինակ Ստիվեն Հասպեդին՝ աջակցության և հայերեն հրատարակության նախաբանը գրելու համար: Անչափ շնորհակալ եմ կնոջս՝ Կարինեին. առանց նրա ամենօրյա օգնության և աջակցության այս գրքի հրատարակումը անհնար կլիներ:

Ալեքսանդր Աղաբեկյան
Թարգմանության գլխավոր խմբագիր

ՆԱԽԱԲԱՆ

1990-ական թթ. համաշխարհային առևտրի անշեղ վերելք է դիտվում ամբողջ տնտեսական գործունեության համեմատությամբ: Նշված տասնամյակի առաջին կեսին մշակող արդյունաբերության արտադրանքի առևտրի ծավալը եռապատիկ արագ էր աճում, քան համաշխարհային արտադրանքի ընդհանուր ծավալը: Բացի այդ, զգալիորեն աճել էր նաև ծառայությունների առևտուրը: Այդ աճը մասամբ տեղի ունեցավ զարգացող շատ երկրների որդեգրած, առավելապես շուկայի վրա հիմնված և արտահանմանն ուղղված զարգացման ռազմավարության շնորհիվ: Առավել կարևոր գործոն է համաշխարհային առևտրի խոչընդոտների շարունակվող վերացումը: Ներկայումս ընթացքի մեջ է խոչընդոտների նոր նվազեցումը, որը հիմնված է 1994 թ. ստորագրված Ուրուգվայի փուլի համաձայնագրի վրա: Նշված համաձայնագրով ստեղծվել է նոր միջազգային հաստատություն՝ Առևտրի համաշխարհային կազմակերպություն, որի խնդիրն է առևտրի համաձայնագրերի կատարման վերահսկումը, անդամ երկրների միջև վեճերի լուծումը և առևտրի շուրջը ապագա բանակցությունների ապահովումը: Կազմակերպությունը դարձել է անդամ երկրների միջև առևտրի վեճերը արդյունավետորեն լուծող մի հաստատություն, որը նպաստեց հեռահաղորդակցության և համակարգչային արտադրանքի առևտրի ծավալման համաձայնագրերի կնքմանը: 1990-ական թթ. արագորեն աճեց նաև տարածքային առևտրի համաձայնագրերի թիվը՝ ներառյալ Հյուսիսային Ամերիկայի ազատ առևտրի համաձայնագիրը, Եվրամիության ընդլայնումը և Կենտրոնական ու Արևելյան Եվրոպայի երկրների միջև ազատ առևտրի մի քանի տարածքների ստեղծումը:

ՆՅՈՒԹԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՍԱԿԱՐԴԱԿԸ

Լուսաբանելով միջազգային տնտեսագիտության ներկայիս զարգացումը, մենք միաժամանակ ցանկանում էինք մեր դասագիրքը մատչելի դարձնել այն ուսանողներին, որոնք տնտեսագիտության հիմունքների միայն մեկ կամ երկու դասընթաց են լսել: Այդ նպատակով մենք նվազագույնի ենք հասցրել մաթեմատիկայի կիրառումը, իսկ առավել բարդ քննարկումները տեղափոխել ենք հավելվածներ... Այս հրատարակության մեջ ավելացվել է մի նոր նյութ՝ *Ինտերնետի կիրառություններ*: Այս վարժությունները ուսանողին կուղղեն Ինտերնետի այն հասցեով, որտեղ նա կարող է առնչվող տեղեկություն ստանալ հարցերին պատասխանելու համար: Սա ուսանողին թույլ կտա անմիջական կապ ստեղծել ստացած գիտելիքների և իրական կյանքի միջև, որն անհնարին է սովորական դասագրքում:

ՆՅՈՒԹԻ ԸՆԴՊՐԿՈՒՄԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ՇԵՆՏԱԳՐՈՒՄՆԵՐԸ

Գրքի 1-ին գլուխը գրեթե ամբողջովին նվիրված է երկրների տնտեսություններին և միջազգային առևտրի յուրահատկություններին և ուղղություններին նկարա-

գրությանը: Ամբողջ գիրքը լցված է բազմաթիվ աղյուսակներով: Մենք ջանացել ենք ներկայացնել ըստ հնարավորին ամենաթարմ վիճակագրական տվյալները:

2-րդ գլուխը միջազգային տնտեսագիտության դասագրքերի համար ամենամասնավոր գլուխներից է: Դրա նպատակն է ներկայացնել ընդհանուր հավասարակշռության նախնական վերլուծությունը և, մասնավորապես, ուսանողներին ծանոթացնել տնտեսական կաղապարի կառուցման եղանակին ու տրամաբանությանը: Գլխի սկզբում, օգտագործելով արտադրության հնարավորությունների սահմանի պարզ գծագրեր, ուղղակիորեն վերլուծված է փակ տնտեսության ընդհանուր հավասարակշռությունը: Այնուհետև ցույց է տրված միջազգային առևտրի մեջ ներգրավվելու նշանակությունը երկրի համար: Հաջորդ երկու գլուխներում պարզաբանվում են առևտրի դասական և Հեկշեր-Օլինի կաղապարների մանրամասները, որպես վերլուծության հիմնական միջոց օգտագործելով արտադրության հնարավորությունների սահմանը: 3-րդ գլխում զետեղված նոր ակնարկի մեջ համեմատվում են աշխատավարձերի և աշխատանքի արդյունավետության տարբերությունները ԱՄՆ-ի և Մեքսիկայի որոշ արտադրաճյուղերում: 4-րդ գլխում նոր ակնարկի մեջ մանրամասն զետեղված է առևտրի և ԱՄՆ-ի մշակող արդյունաբերության մեջ աշխատանքի ու աշխատավարձի կապի վերջերս կատարված ուսումնասիրությունը:

5-րդ գլուխը նվիրված է առևտրի դասական և Հեկշեր-Օլինի կաղապարների փորձաստուգմանը: Այնուհետև համառոտ ներկայացվում են առևտրի նոր տեսություններ, ներառյալ այնպիսի կաղապարներ, որոնք ընդգրկում են անկատար մրցակցությունը և ծավալի աճող հատույցը: 6-րդ գլուխը ներկայացնում է հաջորդ հինգ գլուխներում շարադրված առևտրի քաղաքականությանը վերաբերող նյութը և ներառում է ներմուծման մաքսի քննարկումը: 7-րդ գլխում քննարկվում են առևտրի պաշտպանումը հիմնավորող առևտրի ռազմավարական քաղաքականությունը և շրջակա միջավայրի պահպանումը: Այստեղ նաև ընդգրկված է մի նոր ակնարկ, որտեղ նկարագրվում է Միացյալ Նահանգների և Չինաստանի միջև՝ երաժշտության ձայներիզների և լազերային սկավառակների պատճենման գնումների շուրջը վերջերս տեղի ունեցած բանավեճը: 8-րդ գլուխը մանրամասներ է տալիս ԱՄՆ-ի առևտրի քաղաքականության վերաբերյալ, այստեղ նաև ուսումնասիրվում են նյութի հետ կապված՝ շրջակա միջավայրի խնդիրներին վերաբերող նախադեպեր, գնագցման ԱՄՆ-ի օրենքների կիրառումը և զարեջրի առևտրի շուրջը Կանադայի հետ վերջերս տեղի ունեցած բանավեճը: Այս գլխում մանրամասն քննարկվում են նաև Ուրուգվայի փուլի համաձայնագիրը և Առևտրի համաշխարհային կազմակերպությունը:

9-րդ գլուխը ամբողջովին նվիրված է առևտրի տարածքային համաձայնագրերի տնտեսագիտությանը: Սկզբում ընդունված ձևով քննարկվում են դրանց առավելություններն ու թերությունները: Այնուհետև քննարկվում են Հյուսիսային Ամերիկայի ազատ առևտրի համաձայնագիրը և Եվրամիության համաձայնագրերը: 10-րդ գլուխն ամփոփում է գիրքը՝ անդրադառնալով առևտրին և աճին, ինչպես նաև արտադրության գործոնների միջազգային հոսքերին:

Սրիվեն Հասփեդ, Մայքլ Մելլին

ԲՈՎԱՆՂԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ..... VIII

Գլուխ 1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ..... 1

ԵՐԿՐՆԵՐԻ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ..... 3

 ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԾ..... 8

 ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՌԵՎՏՈՒՐ..... 10

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՌԵՎՏՐԻ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆԸ..... 14

ԵՐԿՐՆԵՐՆ Ի՞ՆՉ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԱՌԵՎՏՈՒՐ ԵՆ ԱՆՈՒՄ 19

ԱՄՓՈՓՈՒՄ 27

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ 27

ԻՆՏԵՐՆԵՏԻ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ 28

Գլուխ 2. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՌԵՎՏՐԻ ԿԱՂԱՊԱՐՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՄԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐ.....29

ՄԻ ՔԱՆԻ ԵՂԱՆԱԿԱԲԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԳՐՅԱԼՆԵՐ 31

ՀԻՄՆԱԿԱՆ ԿԱՂԱՊԱՐ. ԵՆԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ 33

ՀԻՄՆԱԿԱՆ ԿԱՂԱՊԱՐ. ԼՈՒԾՈՒՄՆԵՐ..... 44

ԵՐԿՐԻ ԲԱՐԵԿԵՑՈՒԹՅԱՆ ՉԱՓՈՒՄԸ..... 47

ԱԿՆԱՐԿ 2.1 ՀԱՐԱԲԵՐԱԿԱՆ ԳՆԵՐԸ ՍԱՌԻՅԱՆ ԱՐԱՔԻԱՅՈՒՄ 48

ԱԿՆԱՐԿ 2.2 ԻՐԱԿԱՆ ԵՎԱՍՏԻ ՉԱՓՈՒՄԸ..... 51

ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋԱՐԿՆ ՈՒ ՊԱՅԱՆՋԱՐԿԸ 52

ԱՄՓՈՓՈՒՄ 56

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ 57

ՀԱՎԵԼԿԱԾ 2.1 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՎԱՍԱՐԱԿՇՈՒԹՅԱՆ ԿԱՂԱՊԱՐՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԼԱԿԱԿԱԾ ԳՈՐԾԻՔ 58

Գլուխ 3. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՌԵՎՏՐԻ ԴԱՍԱԿԱՆ ԿԱՂԱՊԱՐ63

ԲԱՑԱՐՉԱԿ ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԱՌԵՎՏՐԻ ՀԻՄՔ.
 ԱՂԱՄ ՍՄԻԹԻ ԿԱՂԱՊԱՐ 64

ՀԱՄԵՍԱՏԱԿԱՆ ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԱՌԵՎՏՐԻ ՀԻՄՔ.
 ԴԱԿԻԹ ՌԻԿԱՐԴՈՅԻ ԿԱՂԱՊԱՐ 71

ԴԱՍԱԿԱՆ ԿԱՂԱՊԱՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՎԱՍԱՐԱԿՇՈՒԹՅԱՆ
 ԼՈՒԾՈՒՄ..... 73

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՌԵՎՏՐԻ ՕԳՈՒՏՆԵՐ..... 79

ԱԿՆԱՐԿ 3.1 ՃԱՊՈՆԻԱՅԻ ՕԳՈՒՏՆԵՐԸ 1858 Թ. ՀԱՍԱՇԽԱՐԳԱՅԻՆ ԱՌԵՎՏՐԻ ՄԱՍՆԱԿԻՑ ԴԱՌՆԱԼՈՒ ՇՆՈՐՀԻՎ 82

ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ԱՇԽԱՏԱԿԱՐՉԵՐԻ ԿԱՊԸ..... 83

ԱԿՆԱՐԿ 3.2 ԱՄՆ-Ի ԵՎ ՄԵՔՍԻԿԱՅԻ ԱՇԽԱՏԱԿԱՐՉԵՐԻ ՈՒ ԱՐՏԱԳՐՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԵՍԱՏՈՒՄԸ..... 85

ԴԱՍԱԿԱՆ ԿԱՂԱՊԱՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ 88

ԱՍՓՈՓՈՒՄ 89

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ 90

ԻՆՏԵՐՆԵՏԻ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ 92

ՀԱԿԵԼՎԱԾ 3.1 ՄԻ ՔԱՆԻ ԱՊՐԱՆՔՈՎ ԴԱՍԱԿԱՆ ԿԱՂԱՊԱՐ..... 93

ՀԱԿԵԼՎԱԾ 3.2 ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅԱՆ ԿՈՐՆ ՈՒ ԱՌԵՎՏՐԱՊԱՅՄԱՆԸ 95

Գլուխ 4. ՀԵԿՇԵՐ - ՕՅԼԻՆԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ 99

ՀԵԿՇԵՐ-ՕՅԼԻՆԻ (ՀՕ) ԿԱՂԱՊԱՐ. ՀԻՄՆԱԿԱՆ ԵՆԹԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ 101

ԱԿՆԱՐԿ 4.1 ԱՐՏԱԴՐԱՄԻՋՈՑ/ԱՇԽԱՏՈՒԺ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ
 ԱՄՆ-Ի ՈՐՈՇ ԱՐՏԱԴՐԱԳՅՈՒՂԵՐՈՒՄ 104

ԱԿՆԱՐԿ 4.2 ԱՐՏԱԴՐԱՄԻՋՈՑ/ԱՇԽԱՏՈՒԺ ՀԱՐԱԲԵՐՎԳՅՈՒԹՅՈՒՆԸ
 ՈՐՈՇ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ 106

ՀԵԿՇԵՐ-ՕՅԼԻՆԻ (ՀՕ) ԹԵՈՐԵՄ 109

ՀԱՎԱՍԱՐԱԿՇՈՒԹՅՈՒՆԸ ՀՕ-Ի ԿԱՂԱՊԱՐՈՒՄ 111

ՀՕ-Ի ՈՐՈՇ ՆՈՐ ԹԵՈՐԵՄՆԵՐ 118

ԱԿՆԱՐԿ 4.3 ԱՌԵՎՏՐՈՒՐԸ, ԱՇԽԱՏԱՎԱՐՁԵՐՆ ՈՒ ԱՇԽԱՏԱՏԵՂԵՐԸ
 ԱՄՆ-Ի ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՈՒՄ..... 123

ՈՐՈՇ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ 126

ԱՍՓՈՓՈՒՄ 127

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ 127

ԻՆՏԵՐՆԵՏԻ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ 129

ՀԱԿԵԼՎԱԾ 4.1 ՀՕ-Ի ՈՐՈՇ ԹԵՈՐԵՄՆԵՐԻ ԱՅԼ ԱՊԱՑՈՒՑՈՒՄՆԵՐ 130

Գլուխ 5. ԱՌԵՎՏՐԻ ԿԱՂԱՊԱՐՆԵՐԻ ՓՈՐՁԱՍՏՈՒԳՈՒՄՆԵՐ. ԼԵՈՆՏԵՎԻ ՀԱՐԱԿԱՐԾՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ..... 136

ԴԱՍԱԿԱՆ ԿԱՂԱՊԱՐԻ ՓՈՐՁԱՍՏՈՒԳՈՒՄՆԵՐ 137

ՀԵԿՇԵՐ-ՕՅԼԻՆԻ (ՀՕ) ԿԱՂԱՊԱՐԻ ՓՈՐՁԱՍՏՈՒԳՈՒՄՆԵՐ 140

ԼԵՈՆՏԵՎԻ ՍՏԱՑԱԾ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՍԱԶԱՅՆԵՑՄԱՆ ՓՈՐՁԵՐ 143

ՀՕ-Ի ԿԱՂԱՊԱՐԻ ԱՅԼ ՓՈՐՁԱՍՏՈՒԳՈՒՄՆԵՐ 146

ՀՕ-Ի ԿԱՂԱՊԱՐԻ ՆՈՐ ՓՈՐՁԱՍՏՈՒԳՈՒՄՆԵՐ 148

ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ԱՌՎԵԼՈՒԹՅԱՆ ԱՅԼԸՆՏՐԱՎՆՔԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ 151

 ԱՇԽԱՏՈՒԺ ՀՄՏՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ 151

 ԱՊՐԱՆՔԻ ԿԵՆՍԱՇՐՋԱՆԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ..... 152

 ՆԱԽԱՄԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆՄԱՆՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ..... 154

ՆԵՐՃՅՈՒՂԱՅԻՆ ԱՌԵՎՏՐԻ 155

ԱճՈՂ ՀԱՏՈՒՅՑԸ ԵՎ ԱՆԿԱՏԱՐ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ..... 158

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ 163

ԱՍՓՈՓՈՒՄ 164

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ 165

ԻՆՏԵՐՆԵՏԻ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ 166

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ	166
Գլուխ 6. ՄԱՔՍԵՐ.....	167
ԱԶԱՏ ԱՌԵՎՏՐԻ ՕԳՈՒՏՆԵՐԸ	168
ՄԱՔՍԵՐ. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	172
ՄԱՔՍԵՐ. ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ	176
ԱԶԱՏ ԱՌԵՎՏՐԻ ՕԳՈՒՏՆԵՐԸ. ՄԵԿ ԱՆԳԱՄ ԵՎՍ.....	177
ՄԱՔՍԵՐԻ ԾԱԽՔԸ ԲԱՐԵԿԵՑՈՒԹՅԱՆ ԱՌՈՒՄՈՎ	180
ՈՐՈՇ ԲԱՐԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ	184
ԼԱՎԱԳՈՒՅՆ ՄԱՔՍ	184
<i>ԱԿՆԱՐԿ 6.1</i> ՄԱՔՍԵՐԻ ԾԱԽՔԸ ԲԱՐԵԿԵՑՈՒԹՅԱՆ ԱՌՈՒՄՈՎ. ԱՄՆ-Ի ՈՐՈՇ	
ԱՐՏԱԴՐԱԾՅՈՒԴԵՐԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՎԵՐՋԻՆ ՏՎՅԱԼՆԵՐ	185
ՈՐՔԱՆՈՎ ԵՆ ԲԱՐՉՐ ՄԱՔՍԵՐԸ.....	191
ՊԱՇՏՊԱՆՄԱՆ ՓԱՍՏԱՑԻ ԴՐՈՒՅՔ.....	191
<i>ԱԿՆԱՐԿ 6.2</i> ՍՍՈՒՏ-ՀՈԼԻԻ ՄԱՔՍԸ ԵՎ ԴՐԱ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ	194
ԱՍՓՈՓՈՒՄ	201
ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ	202
ԻՆՏԵՐՆԵՏԻ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ	204
ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ	205
ՀԱՎԵԼԿԱԾ 6.1 ԱՆԿԱՏԱՐ ՓՈԽԱՐԻՆԻՉՆԵՐԻ ԿԱՂԱՊԱՐ	205

Գլուխ 7. ՈՉ ՄԱՔՍԱՅԻՆ ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐԸ ԵՎ ՊԱՇՏՊԱՆՄԱՆ ՓԱՍՏԱՐԿՆԵՐԸ

209

ԲԱԺՆԵՉԱԾ	211
ԲԱԺՆԵՉԱԾԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՐԵԿԵՑՈՒԹՅԱՆ ՎՐԱ.....	214
ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՔՍԻ ԵՎ ԲԱԺՆԵՉԱԾԻ ՀԱՄԱՐԺԵՔՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ	
ԱՆՀԱՄԱՐԺԵՔՈՒԹՅՈՒՆԸ	217
ՈՉ ՄԱՔՍԱՅԻՆ ԱՅԼ ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐ.....	219
ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԴՐԱՍԱՏԿՈՒԹՅՈՒՆ.....	219
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ	221
ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՈՒ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՉԱՓՕՐԻՆԱԿՆԵՐ	222
ՄՏԱԿՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՔԻ ՊԱՇՏՊԱՆՄԱՆ ՉԱԽՈՂՈՒՄ	224
<i>ԱԿՆԱՐԿ 7.1</i> ԱՄՆ ԵՎ ՉԻՆԱՍՏԱՆ. ՎԵՃԸ ՄՏԱԿՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ	
ԻՐԱՎՈՒՔԻ ՇՈՒՐՋԸ	225
ՈՐՔԱՆՈՎ ԵՆ ԿԱՐԵՎՈՐ ՈՉ ՄԱՔՍԱՅԻՆ ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐԸ	227
ՊԱՇՏՊԱՆՄԱՆ ՓԱՍՏԱՐԿՆԵՐ	230
ՉՀԻՄՆԱԿՈՐԿԱԾ ՓԱՍՏԱՐԿՆԵՐ.....	231
Հայրենասիրություն	231
Զբաղվածություն.....	231
Բաղադրման սխալ.....	232
Արդար խաղի կանոններ տեղական արտադրաճյուղի համար.....	232

Տեղական շուկայի պահպանում	233
Հիմնավորված ՓԱՍՏԱՐԿՆԵՐ.....	233
Կառավարության հասույթ.....	233
Եկամտի վերաբաշխում	234
Արտատնտեսական նպատակներ.....	238
Նորելուկ արտադրաճյուղի պաշտպանում	241
Ներքին խաթարումներ.....	242
Շրջակա միջավայրի պահպանում.....	243
Առևտրի ռազմավարական քաղաքականություն.....	246
ԱՄՓՈՓՈՒՄ	249
ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ	250
ԻՆՏԵՐՆԵՏԻ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ	252
ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ	252

Գլուխ 8. ԱՌԵՎՏՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ. ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳՈՐԾԵԼԱԿԵՐՊԸ.....253

ԱՄՆ-Ի ԱՌԵՎՏՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ	254
ՈՒՐՈՒԳՎԱՅԻ ՓՈՒԼԸ ԵՎ ԱՌԵՎՏՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ	
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՏԵՂԾՈՒՄԸ.....	261
<i>ԱԿՆԱՐԿ 8.1</i> ԳԱՏՏ-Ի ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ.....	262
<i>ԱՌԵՎՏՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ I ՆԱԽԱԴԵՊԻ ՈՒՄՈՒՄԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ.</i>	
<i>ԱՄՆ-Ի ԹՅՈՒՆՈՒՄԻ ՈՐՄԻ ԲԱԺՆԵՉԱՓԸ ԴԵԼՖԻՆԸ ՓՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ.....</i>	269
ԱՄՆ-Ի ԱՌԵՎՏՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ.....	270
ԳՆԱԳՑՈՒՄ.....	271
ՀԱԿԱԳՆԱԳՑՄԱՆ ՕՐԵՆՔ	274
ՓՈԽՀԱՏՈՒՑՈՂ ՄԱՔԻ ՕՐԵՆՔ.....	277
ԱՆԱՐԴԱՐ ԳՈՐԾԵԼԱԿԵՐՊ ԱՐՏԱՍԱՀՄԱՆՈՒՄ. 301-ՐԴ ԲԱԺԻՆ.....	279
<i>ԱՌԵՎՏՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ II ՆԱԽԱԴԵՊԻ ՈՒՄՈՒՄԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ.</i>	
<i>ՀԱՄԱԿԱՐԳԻՉԻ ԶՈՒՑԱՍՈՐՔԻ ԼՈՒՄՊԱՍՏԱՈՒ.....</i>	280
ԱԶՏՄԱՆ ԴՐՈՒՅԹ. 201-ՐԴ ԲԱԺԻՆ.....	283
<i>ԱՌԵՎՏՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ III ՆԱԽԱԴԵՊԻ ՈՒՄՈՒՄԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ.</i>	
<i>ԱՄՆ - ԿԱՆԱԴԱ ԳԱՐԵՅՐԻ ՊԱՏԵՐԱՉՄԸ.....</i>	284
ԱՅԼ ՄԻՋՈՑՆԵՐ.....	286
ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅՈՒՆ ՈՒՐԻՇ ԵՐԿՐՆԵՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ.....	287
ԱՄՓՈՓՈՒՄ	289
ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ	290
ԻՆՏԵՐՆԵՏԻ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ	291
ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ	292

Գլուխ 9. ԱՌԵՎՏՐԻ ՆԱԽԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐ.....293

ԱՌԵՎՏՐԻ ՆԱԽԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐ. ՏՆՏԵՍԱԿԱՆ

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ.....	296
ՀՅՈՒՄԻԱԿԱՅԻՆ ԱՍԵՐԻԿԱՅԻ ԱԶԱՏ ԱՌԵՎՏՐԻ ՀԱՄԱԶԱՅՆԱԳԻՐ.....	300
ՆԱՖՏԱՆ ԵՎ ԱՄՆ-Ի ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ. ԵՐԵՔ ՏԱՐԻ ԱՆՑ.....	303
<i>ԱԿՆԱՐԿ 9.1</i> ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐ ՆԱՖՏԱ-Ի ՄԱՍԻՆ.....	305
ԵՎՐԱՄԻՈՒԹՅՈՒՆ.....	310
ԵՎՐԱՄԻՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ.....	311
ԵՎՐՈՊԱՅԻ 1992 Թ. ՆԱԽԱԶՆԵՐՈՒԹՅՈՒՆ.....	313
ՏԱՐԱԾՔԱՅՆՈՒԹՅՈՒՆՆ ԸՆԴԴԵՄ ԲԱԶՄԱԿՈՂՄՈՒԹՅԱՆ.....	315
<i>ԱԿՆԱՐԿ 9.2</i> ԱՌԵՎՏՐԻ ՆԱԽԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ԱՅԼ ՀԱՄԱԶԱՅՆԱԳՐԵՐ.....	316
ԱՍՓՈՓՈՒՄ.....	319
ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....	320
ԻՆՏԵՐՆԵՏԻ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....	321
ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ.....	322

Գլուխ 10. ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԱՌԵՎՏՐՈՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԸ.....323

ԱՌԵՎՏՐՈՐԸ ԵՎ ԶԱՐԳԱՅՈՒՄԸ.....	325
ՀՈՒՄՔ ԱՐՏԱՀԱՆԵԼՈՒ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ.....	325
ՆԵՐՄՈՒԾՈՒՄԸ ՓՈԽԱՐԻՆԵԼՈՒ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ.....	329
ԴԵՊԻ ԴՈՒՄՍ ԿՈՂՄՆՈՐՈՇՎԵԼՈՒ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ.....	331
ԱՌԵՎՏՐՈՐԸ ԵՎ ԱՃԸ.....	331
<i>ԱԿՆԱՐԿ 10.1</i> ԴԵՊԻ ԴՈՒՄՍ ԿՈՂՄՆՈՐՈՇՎԵԼՈՒ ԵՎ ՆԵՐՄՈՒԾՈՒՄԸ ՓՈԽԱՐԻՆԵԼՈՒ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏՈՒՄԸ.....	332
ԱՌԵՎՏՐՈՐԸ ԵՎ ԱՃԸ. ԼՐԱՑՈՒՑԻՉ ՄԵԿՆԱԲԱՆՈՒՄՆԵՐ.....	343
ԱՐՏԱԴՐԱԵՂԱՆԱԿԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ.....	343
ԱՃԸ, ԳՆԵՐԸ ԵՎ ԲԱՐԵԿԵՑՈՒԹՅՈՒՆԸ.....	344
ԳՈՐԾՈՆՆԵՐԻ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ՀՈՒՔԵՐ.....	346
ԱՇԽԱՏՈՒԺ.....	346
<i>ԱԿՆԱՐԿ 10.2</i> ՀՈՒԱՆԴԱԿԱՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆ.....	347
ՄԻՋՈՑՆԵՐ.....	350
ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ.....	353
ԱՍՓՈՓՈՒՄ.....	359
ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....	360
ԻՆՏԵՐՆԵՏԻ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....	361
ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ.....	361

ԱՆԳԼԵՐԵՆ-ՀԱՅԵՐԵՆ ԲԱՌԱՐԱՆ.....
363

ՀԱՅԵՐԵՆ ԵԶՐԵՐԻ ԲԱՌԱՑՈՒՅՑ.....
394

ԲԱՌԱՑՈՒՅՑ.....
398

1 | Ն ԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Քննարկվող նյութեր	Առանցքային եզրեր
<p>Ազգային արտադրություն Միջազգային առևտրի չափերը Առևտրի գործընկերներ Առևտրի հոսքերի հիմնօրինակներ</p>	<p>Համախառն ազգային արդյունք (ՀԱԱ) Համախառն ներքին արդյունք (ՀՆԱ) Արտահանում Ներմուծում Բացութայան գործակից Առևտրի պակասուրդ Առևտրի հավելուրդ</p>

Մ

իջազգային տնտեսագետության մասնագետները շատ հետաքրքիր հարցեր են ուսումնասիրում: Արդյո՞ք միջազգային առևտրի աճի պատճառով ամերիկացիները կորցնում են «լավ» աշխատատեղերը: Կարո՞ղ են ԱՄՆ-ի ձեռնարկությունները մրցակցել այն երկրների ձեռնարկությունների հետ, որոնցում աշխատավարձը ցածր է: Արդյո՞ք արտասահմանյան երկրները կիրառում են «ա-

ճարդար առևտրի գործելակերպ», և եթե՝ այո՛, ապա ինչպե՞ս պետք է պայքարել դրա դեմ: Ինչո՞ւ է այդքան մեծ Միացյալ Նահանգների առևտրի պակասուրդը, և արդյո՞ք դա կորստաբեր է տնտեսության համար: Ո՞րն է դոլարի բուն արժեքը: Այսինքն՝ տնտեսագետներին հուզում են իրական աշխարհի բազմաթիվ հարցեր, որոնք գրեթե ամեն օր տեղ են գտնում նորությունների երեկոյան հաղորդումներում:

Այս գիրքը միջազգային տնտեսագիտության մի համապարփակ ներածություն է: Այստեղ քննարկվելու են վերոհիշյալ բոլոր հարցերը: Ցույց կտրվի, թե տնտեսագետներն ինչպես են հետազոտում այս հարցերը: Մեծաքանակ տեղեկություններ կտրամադրվեն միջազգային առևտրի գործարքների չափերի ու բնույթի մասին: Ընթացքում կփորձենք արժարժվող բազմաթիվ հարցերն ու գաղափարները շաղկապել իրական աշխարհի իրադարձությունների հետ: Եվ, վերջապես, որ ամենակարևորն է, կփորձենք տալ վերլուծության գործիքների մի հավաքածու, որը հնարավորություն կընձեռի ուսումնասիրելու վերը նշված խնդիրները և գնահատելու ապագա իրադարձությունները:

Հիշենք, որ տնտեսագիտության հիմունքների դասընթացի նյութը բաժանված է երկու հիմնական մասի՝ միկրոտնտեսագիտության և մակրոտնտեսագիտության: Միջազգային տնտեսագիտության մեջ՝ ընդհանրապես, և այս գրքում՝ մասնավորապես, կա նյութի նմանատիպ բաժանում: Երկրորդ հատորի գլուխները նվիրված են միջազգային առևտրի տեսությանը (միջազգային միկրոտնտեսագիտությանը): Այդ գլուխներում հիմնական ուշադրության առարկան բարիքների ու ծառայությունների միջազգային փոխանակումն է: Հատկապես ուշադրության են արժանի հետևյալ հարցերը: Ինչո՞ւ են երկրներն ընդգրկվում միջազգային առևտրում: Ի՞նչ բարիքների առևտուր են կատարում երկրները: Ի՞նչ ազդեցություն ունի միջազգային առևտուրը տնտեսության մեջ աշխատատեղերը բաշխելու և վաստակի չափերի վրա: Արդյո՞ք անհրաժեշտ է միջազգային առևտուրը կարգավորել մաքսերով, բաժնեչափերով ու այլ խոչընդոտներով, և եթե՝ այո՛, ի՞նչ չափեր պետք է ունենա կարգավորումը: Երկրների վրա ի՞նչ ազդեցություն ունեն աշխատուժի և դրամամիջոցների միջազգային հոսքերը: Ի լրումն՝ այս հատորում քննարկվում է, թե ինչպես է մշակվում առևտրի քաղաքականությունը Միացյալ Նահանգներում և այլուր, ինչպես նաև նկարագրվում են երկրների միջև ներկայումս գոյություն ունեցող առևտրի համաձայնությունների տարբեր ձևերը:

Գրքի առաջին հատորը՝ վերաբերում է միջազգային ֆինանսներին (այսինքն՝ միջազգային մակրոտնտեսագիտությանը) և նվիրված է ֆինանսական ունեցվածքի միջազգային փոխանակմանը: Ուսումնասիրվող հարցերից են՝ վճարումների հաշվեկշիռը, փոխանակման դրույքների որոշումը, փոխանակման դրույքների, գների ու շահադրույքների փոխհարաբերությունը, միջազգային դրամագործությունը, պարտքը և ռիսկը, ինչպես նաև տարբեր երկրների մակրոտնտեսական քաղաքականության փոխազդեցությունը: Հատորում նաև քննարկվում են փողի միջազգային համակարգի զարգացումը և միջազգային կազմակեր-

*Ս. Հաստեղ, Մ. Մելվին, *Միջազգային տնտեսագիտություն*, I հ. *Միջազգային ֆինանսներ*, Եր., Գիտանք, 1999, 368 էջ:

պությունների, օրինակ՝ Արժույթի միջազգային հիմնադրամի դերը արդի միջազգային տնտեսությունում:

Տնտեսագիտության նպատակն է՝ գտնել իրական աշխարհում տեղի ունեցող գործարքների հիմնօրինակների բացատրությունը: Միջազգային տնտեսագիտության վերլուծության առարկան աշխարհի երկրների գործարար փոխազդեցությունն է: Միջազգային տնտեսագիտության նպատակն է՝ ստեղծել բավականին ընդհանուր տեսական հիմք, որը թույլ տա առաջարկել երևույթների բացատրություններ և կատարել միջազգային իրավիճակի փոփոխությունների հավանական հետևանքների կանխատեսումներ: Այսպիսով, գրքում քննարկումների մեծ մասը նվիրված է տնտեսական վարքը մեկնաբանող տեսությունների մշակմանը: Սակայն տեսական ընդհանրացումները չեն կատարվում դատարկ տեղում, դրանք պետք է հիմնված լինեն փաստերի վրա: Ինչքանով է կարևոր միջազգային առևտուրն աշխարհի պետությունների համար: Ո՞ր երկրներն են առևտուր անում միմյանց հետ: Ի՞նչ ապրանքներ են գնում ու վաճառում երկրները: Այս գլխի հետագա շարադրանքը նվիրված է նման հարցերի փաստարկված պատասխաններին: